

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլ. առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզումով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կատարինէ, Առաքել և Արմենուհի Բարախանեանները որտէր ցաւով յայտնում են ազգականներին և բարեկամներին՝ առաջինը իր սկեսորը, երկրորդը իր մայրը և երրորդը իր տատը

Եղիաւարեք Բարախանեանի

մահը, որ տեղի ունեցաւ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ, նոյեմբերի 2-ին: Յուշարկաւորութիւնը շարժւած օր, նոյեմբերի 5-ին, առաւօտեան ժամի 10-ին, հանգուցեալի բնակարանից, Սօլմոնովսկայեան փողոց տուն № 14, դէպի Ջորաշէնի Աւետեաց եկեղեցին, իսկ այնտեղից՝ Սօլմոնովսկայեան գերեզմանատունը:

Հոգեհանգիստը ուրբաթ օր, նոյեմբերի 4-ին, երեկոյեան ժամի 5-ին: 1—2

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Քաղաքական համախմբումներ. վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւնները գաւառից. Ներքին Տեղեկութիւն. Ընթերցողի օրագիրը. Քաղաքական մամուլից. Ռուսաստանի արտաքին յարաբերութիւնները. Ուր է մեր գիտակցութիւնը. Նամակ վարդապետից. Նամակ Մեղրիից. Նամակ Ստաւրոպոլից. Ներքին լուրեր. — Հեռագրեր — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐ

Երեկվայ մեր յօդուածով մենք ընդգծեցինք այն ծրագիրը, որ հանդէս է բերված առհասարակ անհաւատիկայի և կուսակցութեան ծրագրի անունով:

Ենթադրվում է, որ այն անձերը, որոնք հաւանում են այդ ծրագիրը, կաշխատեն միմեան, կազմակերպվել և պետական կեանքի մէջ իրագործել այդ ծրագիրը:

Կազմակերպութեան գործը, անշուշտ, չէ կարող յետաձգել, որովհետեւ նոր քաղաքական կեանքը սկսվում է այն բնութեան վրայ, որոնք պէտք է շուտով կատարվեն պետական գումարի կազմը ստեղծելու համար: Այդ ընտրութիւնները տեղի կունենան պետական բոլոր մասերում, նրանց թուում է Անդրկովկասում:

Սկզբում Անդրկովկասում, ինչպէս և պետութեան ուրիշ մասերում կուսակցական բաժանումները կը լինեն ձևակերպված խոշոր ընդհանուր գծերով, իսկ ապագայում, անհասկած, նրանք կը սկսեն հարաւորապէս մանրամասնութիւններով և առաջ կը գան նոր ստորաբաժանումներ կամ կը կազմակերպվեն նոյն իսկ նոր կուսակցութիւններ:

Մի այնպիսի ծրագիր, ինչպէս է սահմանադրական - առհասարակ անհաւատիկայի օրինակ հաւանականութիւն կը գտնէ շատ խաւերում և ըստ երևութիւն կը միացնէ շատ մարդկանց, բայց յետոյ, երբ կեանքի հարցերը կը դառնան հերթական քննութեան առարկայ և կը պահանջվի գործնական որոշ դիրք բռնել այս կամ այն երևոյթի դիմաց, այն ժամանակ կը պարզվի, որ սկզբնական մի գործակից տակ համախմբածները ամենախիստ համախոհ չեն և պէտք է միմեանցից տարբեր համախմբումներ մէջ մտնեն:

Փրանսիական, անգլիական, ամերիկական, գերմանական իրաւակարգերի գործնական կեանքը մեզ ցոյց է տալիս, որ քաղաքական կուսակցութիւնները, համաձայն լինելով որոշ հիմնական սահմանադրական հարցերում, այնուհետեւ բոլորովին տարբեր հայեացքներ և ծրագիրներ ունեն հասարակական և տնտեսական բարենորոգումների վերաբերութեամբ:

Այս իսկ պատճառով մեր երկրի մէջ նկատվող այժմեան համախոհութիւնը և համաձայնութիւնը իրաւակարգի հիմնական պայմանների վերաբերութեամբ, դեռ իրաւունք չեն տալիս մարդկանց ճշնայն այդ միութեան պատճառով համարել մի կուսակցութեան անդամներ:

Մեր հայկական կեանքի մէջ միթէ

մեզ յայտնի չէ գանազան կուսակցութիւնների գոյութիւնը թէ կողմասուս և թէ ոչ. Պոլսում: Իսկ երբ ժամանակով կեանքը ճոխանայ և բարդանայ, երևան կը գան նոր համախմբումներ, որոնք և կաշխատեն որոշ դիրք բռնելով և կազմակերպութիւն ստանալով, ազգել գործերի վրա:

Այժմ խնդիրը վերաբերում է հիմնական խոշոր կէտերին, որոնց վերաբերութեամբ տեղի կունենան պայմանաւորումներ առաջիկայ շաբաթներում:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեկ թիֆլիս հասան Գանձակի գաւառի Մարով գիւղի շրջանից գիւղական լիազօրներ չափազանց կակծալի և գաւառ գանազաններով:

Ներկայումս թուրքերը անխնայ կերպով քանդում են հայ գիւղական տները, կտրատում են մեր այգիները, խլում են մեր տաւարը, օր օրի վրա գրութիւնը դառնում է ծանր և ողբերգական:

Ինչպէս թէ քանդում են տները, հարցընք մենք, իսկ դուք միթէ չէք դիմադրում:

Իմադրում ենք թուրքերին և պաշտպանում ենք գիւղերը, որքան կարող ենք, բայց շատ հայ գիւղեր բոլորովին դատարկվել են բնակչութիւնից, ուստի տները և տներին կից այգիները, պարտէզները մնացել են անխնամ, թողնված աւազակների հաճոյքին:

Ինչպէս չեն գիւղացիները մնացել իրանց գիւղերում:

Որովհետեւ, բացառեցին նրանք, գիւղերը փոքր գիւղեր են և պաշտպանութեան մեծ ոյժ չունեն: Մեր շրջանում մեծ գիւղ Բէգիւղ-Մարովն է, որ ունի մօտ 250 տուն: Այդ գիւղն են երկու պատապարդելու հարեան Մարով-Մարալիան (50 տուն), Ղահրիլար (30 տուն), Ղարամանլի (10 տուն) գիւղերի բնակիչները:

Նւ յոյս ունէ՞ք արդեօք, որ անփաս կը մնայ այդ գիւղը:

Կը դիմադրենք, որքան կարող ենք: Բացի այդ՝ գիւղը մենք զբաղւել ենք փոքր ի շատէ անմատչելի իրամատով:

Ինչպէս:

Գիւղի շուրջը փոքր ենք խրամատ, որպէս զի յարձակվողները չը կարողանան ազատ մուտք գործել գիւղի մէջ: Բայց մեր թշնամիները չափազանց բազմաթիւ են և բաւական լաւ զինված:

Որքան մեծ է թուրքերի ոյժը, հետաքրքրվեցինք մենք:

Մերձակայ թուրք գիւղերից ամենափառապաշտներն են մեզ համար Ղարամանլի (մօտ 300 տուն), Ջիւլի (800 տ.), Ղալաշլի (մօտ 200 տ.), Սաֆիւրլի (երկու Սաֆիւրլիում 250 տ.), այնուհետեւ Բօրսունլի, Բօյաճաղալի, Նամարլի, Ղուրամանլի համեմատաբար աւելի փոքր գիւղերը: Ինչպէս տեսնում էք թուրքերի ոյժը շատ մեծ է: Թուրքերի խմբերն ազատ մտնում են անբնակ մասեր:

ցած գիւղերը և այնտեղից տանում ագիւղներ, գերաններ դնենք: Տարեկ են նոյն իսկ Ղահրիլար գիւղի եկեղեցու գոնները և ուրիշ իրեր:

Իսկ դուք միթէ չէք գանազանվել, միթէ տեղական իշխանութեան յայտնի չէ այդ բոլորը:

Ինչպէս չէ, մենք գանազանվել ենք նոյն իսկ գերանաւ-նահանգապետ Տաւաշլիլում, երբ նա հոկտեմբերի 7-ին թուրքերին հետ, բայց նրանք մեզնից ձեռք չեն վերցնում: Տանում են մեր տաւարը՝ մենք լուծւում ենք, չենք գնում յետ բերելու, կտրատում են այգիները, մենք չենք գնում խանգարելու:

Ինչպէս:

Որովհետեւ նրանք մի առիթի են սպասում խմբական յարձակում գործելու մեզ վրա: Թէ և արօտները դեռ բաց են, բայց մենք ստիպված ենք տաւարը տանք պահելու և չոր խոտով կերակրելու: Մեր բամբակը փչացաւ արտերում և մենք չը վստահացանք գնալ քաղելու, որովհետեւ արտերը հեռու են գիւղից: Նւ ում վրա կարող ենք օգնութեան յոյս դնել, երբ ոչ ոք չեկաւ պաշտպանելու, երբ թուրքերը այրում և աւերում էին հայ Նարմալ (15 տուն) փոքրիկ գիւղը, որի բնակիչները պատապարդվել էին Սէյսուլան (30 տուն) հայ գիւղում: Նոյն վտանգի մէջ է գտնվում և մեզնից մօտ գտնվող Հասանդալ գիւղը:

Իսկ ով է ազգեցիկ դեր կատարող թուրքերի մէջ:

Նրանք ունեն կազմակերպութիւն, բայց շատ ազգեցիկ դեր կարող են կատարել բէգերը և եթէ վերջիններս վճարական և կարողանան կերպով ցանկանան, նրանք վերջ կը դնեն այս անկարգութիւններին: Իսկ զլխաւոր գաղտը պէտք է լինի տեղական իշխանութիւնը, որ անգործ է և անպատիժ է թողնում չարագործներին:

Գնե՛րալ Տակաշլիլու ամենաողորմած հրամանով հոկտեմբերի 27-ին Շուշում ձերբակալել են բժիշկ Լեւոն Սթաբիլեանին: Ձերբակալումը կատարվում է այնպէս, որ կարծես մի աւազակ, մի ոճրագործ են բռնում: Կազակներն ու զօրքերը շրջապատում են բժիշկի տունը՝ յանկարծակի, միջուկ, գինված ու պատրաստ... Մաքրում է գնե՛րալ Տակաշլիլիլին իր նահանգը, մաքրում է ոչ թէ գործերից ու աւազակներից, այլ մաքրում, անմեղ ու լուսաւոր անձերից: Ահա մի անմեղ աւելի է բանտում և և Ռուսէն Իւզբաշեանը, չ. Մեքլեմեանը (ուսանող) և նրանց ընկերները: Երեւի շուտով գնե՛րալի համար պէտք կը լինի նոր բանտեր, որովհետեւ, այդպէս շարունակելով, ամբողջ նահանգի հայ ինտելլիգենցիան բանտերում կը բանան իրանց աչքերը: Սակայն երէկ թիֆլիսում հեռագիր ստացվեց, որ թէ բժիշկ Սթաբիլեանին, թէ Իւզբաշեանին, Մեքլեմեանին և թէ միւսներին բանտից արձակել են: Միայն գնե՛րալը հրամայել է բժիշկին 24 ժամում թողնել Շուշին, իսկ բժիշկը Փոխարքայից հեռագրով թոյլտւութիւն է խնդրել միայն Շուշում մինչև նոյեմբերի 6-ը: Երեւի այդ թոյլտւութիւնը կը տրվի:

Բազուից մեզ գրում են նոյեմբերի 1-ից. «Մի քանի օր շարունակ անպատիժ կերպով հայոց տները թալանելուց ու

հրդեհելուց յետոյ Բագուի խուլիգանների ճաշակը չափազանց զրգովի էր, և այսօր էլ կիրակի, 30-ին հոկտ., նախորդների նման նրանք պատկերներով ու ազգային դրօշակներով դուրս էին եկել փողոցները շրջելու, սպանալով շնչել բոլոր հայերին, եթէ նրանք որ և է դիմադրութիւն ցոյց կը տան. բայց այս անգամ բախտը նրանց չը ժպտաց: Առաւօտեան վաղ հաւաքվելով եկեղեցու բակը, հակառակ գնեւ. Տօլմաշօվի տուած հրամանի, մեծ ամբոխով գիւղացիներ դէպի գնեւ. նահանգապետի տունը, որտեղից հրաման ստանալով պիտի ճանապարհ ընկնէին դէպի հայկական թաղերը: Բայց այս անգամ նահանգապետը նրանց սիրով չընդունեց և հրամայեց անյապաղ ցրվել, հակառակ դէպքում սպանալով ոյժի դիմել: Խուլիգանները անցեալի փորձից համակացած լինելով, թէ ինչ է նշանակում այդ հրամանը, չուղեցին լսել և ուղում էին առաջ գնալ, բայց ճէնց որ գիւղերում հրացանների փողերը ուղղեցին նրանց վրա, սկսեցին փախչել. սա մի շատ լաւ ապացոյց էր թէ որքան հեշտութեամբ կարելի է ցրել այնպիսի խմբերը, որոնք «ազգային» դիմալի տակ դուրս են գալիս անմեղ ու խաղաղ ժողովրդին կոտորելու, տները հրդեհելու:

Ստում են, որ խուլիգանները շատ զբոս են գնեւ. նահանգապետի այդ քայլից և մանաւանդ Տօլմաշօվի տուած կտրուկ հրամանից:

Կերակին և հետեալ օրերը խաղաղ անցան, որի շնորհիւ և վերացաւ այն հրամանը, որ արգելում էր ժամի 8-ից յետոյ դուրս գալ տանից:

Աւելորդ չենք համարում յիշել, որ անցեալ օրվայ Բագուից արված տեղեկութիւնը, թէ «թուրքերը միացան կոզակների և սե հարկուրակի հետ, կրակելով հայերի հոյակապ տները», չափազանցութիւն է և պարզեք ենք համարում շեշտել, որ ոչ թէ թուրքերն էին միացել խուլիգաններին, այլ միայն նրանց տակաւնները, զեկաւորութեամբ արխիթուրիզան Աշուրօվի, իսկ հասակացող թուրքերը ընդհակառակը լաւ դիրք էին բռնել և աշխատում էին ամբոխին հեռու պահելու խուլիգանների մտադրութիւններից: Մինչև անգամ պատմում են, որ քաղաքային տեղապահ Սաֆարալիեւ ծեծել է մի թուրքի, որը վերցրած աւարը ձեռքին փախչում էր:

Մարգար

Գանձակի մեր թղթակից Ս. Տէր-Աւետիքեան հետեալն է հաղորդում մեզ նոյեմբերի 1-ից:

Ռուսաց գործակալութեան հեռագիրը Գանձակից, խիստ հոկտեմբերի 27-ին, այն մասին, որ Մարուստ գիւղում թուրքերը կոտորվել են հայերի թէ ձեռք բերել և այդ լուրը յուզել է թուրքերին, արդարացի զայրոյթ է յարուցել հայ հասարակութեան խաւերում, քանի որ այդ լուրը հրէշաւոր սուտ է, անխիղճ, անամօթ սուտ:

Ռուսաց գործակալութիւնը միշտ աշխատել ու աշխատում է կուեցնել հայերին ու թուրքերին. հայի արեան հեղումը նրան մի առանձին բաւականութիւն է պատճառում. նրա յանցաւոր ընթացքը վերջապէս պէտք է վերջ ստանայ ազատ, սահմանադրական Ռուսաստանում, որի գործակալութեան մէջ գործող «պատրիստներ» պէս խելակորոյս գաւազները անչափ չարիքներ են հասցրել. ժամանակ է, որ բազմաշարք Ռուսաստանը ազատվի այդպիսի չարամիտ գաւազների յանցաւոր ծառայութիւնից... Բայց նրանք մի տեսակ դիւալին նենդաւարութեամբ շարունակում են տանել ընդգծած ուղիով, ընդգծած նորերս տա-

Электротечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. Ул. № 15.